Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Մարմաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի և անվտանգ կենսագործունեության (զինղեկի՝ 1 դրույք), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն(Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող թաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են մարտի 9-ից մինչև մարտի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00 բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 24-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Ախուրյան համայնք, գ. Մարմաշեն, փ.38, շ. 27: Տեղեկությունների համար զանգահարել 091 324152 հեռախոսահամարով: